# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3161-Ա «26» հունիսի 2026թ.

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝

1.Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-26/2 | 1 | Երևան քաղաքի Հրազդանի Մեծ Կամրջի (Կիևյան կամուրջ) հիմնանորոգման | 489375342 | «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ | 00456403 | ք. Երևան, վարդանանց 112 | 10.05.2026թ. | Երևանի քաղաքապետարան | 1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2 ենթակետ (գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ՀՀ քաղաքաշինությ | Առկա չէ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատանքներ | | | | | | | ան բնագավառում գործող լիցենզավորված կազմակերպությունների ցանկը, որով պարզվել է, որ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն չունի հրավերով սահմանված շինարարության իրականացման գործունեության 1-ին դասի լիցենզիա՝ ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտների՝ տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն), որը ստուգվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորված և կասեցված կազմակերպությունների ցանկում՝ որը առկա է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պաշտոնական կայքէջում (https://www.minurban.am/hy/licensecank): | |

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ** 